Քննարկվել է մանկավարժական
խորհրդի25 .08.2023թ.-ի №1նիստում
Հաստատված՝դպրոցի տնօրենի հր.54-Լ, 28.08.2023թ.
Տնօրեն Ալիսա Մինասյան

# ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ«ԽՈՏԻ ՄԻՋՆԱԿԱԳ ԴՊՐՈՑ»ՊՈԱԿ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ

[Document subtitle]

2023-2024ՈՒՍՏԱՐԻ

## Բաժին 1
## Պարտադիր կրթության կենսագործում

| | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետ | Պատասխանատու | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | Անցկացնել 6 տարեկան երեխաների հաշվառում դպրոցի սպասարկման տարածքում: | մարտ | Լ.Ղազարյան դասվարեր | |
| 2 | Հնարավորության սահմաններում սոցիալապես անապահով երեխաներին գրենական պիտույքներով: | սեպտեմբեր | Լ.Ղազարյան Ն.Կարապետյան | |
| 3 | Կատարել միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ երեխաների հաշվառում: Խորհրդակցական մարմինների միջոցով օգնել նրանց | սեպտեմբեր | Լ.Ղազարյան Ն.Կարապետյան | |
| 4 | Սահմանել վերահսկողություն պարբերաբար ուշացումների և անհարգելի բացակայությունների նկատմամբ, ժամանակին կանխել դրանք, անհրաժեշտության դեպքում առաջնորդվել օրենքով սահմանված կարգով: | տարվա ընթացքում | Լ.Ղազարյան Ն.Կարապետյան | |
| 5 | Ուշադրության կենտրոնում պահել ետ մնացող աշակերտներին այն հաշվով, որ բոլորն էլ ընդգրկվեն դպրոց: | տարվա ընթացքում | Լ.Ղազարյան Ն.Կարապետյան դասղեկներ | |
| 6 | Աշխատանք տանել 5-12-րդ դասարանների դժվար դաստիարակվող երեխաների և նրանց ծնողների հետ: | ուստարվա ընթացքում | Լ.Ղազարյան Ն.Կարապետյան դասղեկներ | |
| 7 | Պարտադիր ուսուցման գործընթացային մասնակից դարձնել ծնողներին և ծնողական խորհուրդին: | ուստարվա ընթացքում | Լ.Ղազարյան Ն.Կարապետյան դասղեկներ | |
| 8 | Դժվար առաջադիմող և երկտարեցի աշակերտներին, ըստ նրանց ընդունակությունների ու հետաքրքրությունների, ընդգրկել արտադպրոցական խմբակներում, ակումբներում, սեկցիաներում: | ուստարվա ընթացքում | Լ.Ղազարյան Ն.Կարապետյան դասղեկներ | |
| 9 | Օրենքով չարգելված աղբյուրներից հարստացնել դպրոցի արտաբյուջետային միջոցները | սեպտեմբեր հոկտեմբեր | Կառավարման խորհուրդ ,խորհրդակցական մարմին և դպրոցի տնօրենություն | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 10 | Արտաբյուջետային միջոցները ներդնել ուսումնական պրոցեսի արդյունավետության բարձրացման նպատակով: | ուստարվա ընթացքում | Լ.Ղազարյան Ն.Կարապետյան խորհուրդ | |
| 11 | Ավագ դպրոցում աշակերտների ընդունելությունը իրականացնելու համար ստեղծել հասարակական հիմունքներով աշխատող մանկավարժների խորհրդակցական խումբ: | օգոստոս | Ա.Մինասյան մ/մ նախագահներ | |
| 12 | Կոմպլեկտավորել հաստատության դասարանները. երեխաներին ծանոթացնել դպրոցի ներքին կարգապահական կանոններին, գործող ռեժիմին, ինչպես նաև իրենց իրավունքներին ու պարտականություններին: Ստեղծել ջերմ մթնոլորտ ուսումնական գործընթացը բարեհաջող սկսելու համար: | օգոստոս | Ա.Մինասյան<br><br>Լ.Ղազարյան Ն.Կարապետյան դասղեկներ | |

## Աշխատանք մանկավարժական կադրերի հետ, որակավորման բարձրացում
## Բաժին 2

| | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետ | Պատասխանատու | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | Գրադարանում ստեղծել մեթոդական բաժին, հարստացնել մեթոդական մասնագիտական գրականությամբ, ինչպես նաև առարկայական ծրագրերով և չափորոշիչներով: | օգոստոս - սեպտեմբեր | Լ.Ղազարյան Ն.Կարապետյան | |
| 2 | Տարեսկզբին հրավիրել առարկայական մասնախմբերի նախագահների խորհրդակցություն, պլանավորել նրանց աշխատանքային տարեկան գործունեությունը հանրակրթական հաստատությունում ուսումնադաստիարակչական աշխատանքի արդյունավետության բարձրացման ուղղությամբ: Հանձնարարել՝ | օգոստոս | Ա.Մինասյան | |
| | ա/ առարկայական մասնախմբերում քննարկել, ամբողջական տեսքի բերել ուստարվա առարկայական մասնախմբի աշխատանքային պլանը և ներկայացնել | օգոստոս | Ա.Մինասյան | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | հաստատման, | | | |
| | բ/ ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամաքանակի տնօրինման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում, | օգոստոս | Ա.Մինասյան | |
| | գ/ ստուգել ուսուցիչների առարկայական թեմատիկ պլանները, տալ համապատասխան հանձնարարություններ: Թեմատիկ պլաններում առարկայի չափորոշչային պահանջների համապատասխանության և պլանի լիարժեքության մասին ներկայացնել հաշվետվություն /գրավոր/ տնօրինությանը: | սեպտեմբե-րի 1-5 | Ա.Մինասյան | |
| 3 | Անցկացնել առարկայական մասնախմբի ղեկավարների սեմինար խորհրդակցություն: Լսել մասնախմբի նախագահների հաշվետվությունները կատարված աշխատանքների մասին, քննարկել, տալ համապատասխան հանձնարարություններ, անհրաժեշտության դեպքում աշխատանքային պլաններում կատարել փոփոխություններ, քննարկել մեթոդամանկավարժական հրատապ հարցեր | ամիսը մեկ անգամ | Հ. Ստեփանյան Ա.Մինասյան | |
| 4 | Դասղեկների աշխատանքները կատարելագործելու նպատակով դպրոցում ստեղծել 1-12-րդ դասարանների դասղեկների միավորումներ: Պլանները ներկայացնել հաստատման՝ նշված ժամանակահատվածում: Տարրական դպրոց- Միջին դպրոց- Ավագ դպրոց: | օգոստոս | Լ. Ղազարյան | |
| 5 | Կատարել դասալսումներ՝ միջին հաշվով շաբաթական 13-16 ժամ /տնօրեն՝ 3-4, փոխտնօրեն 5-6, առարկայական մասնախմբի նախագահ՝ 2-3/: Ուսուցիչներ 1-2: Դասալսումները ներկայացնել նպատակային և նույն օրը քննարկել ուսուցչի հետ և կազմել դասալսման արձանագրություն: | ուստարվա ընթացքում | Ա.Մինասյան Լ.Ղազարյան մասնախմբի նախագահներ | |
| 6 | Ստեղծել <<Հետազոտական դպրոց, | սեպտեմբեր | Ա.Մինասյան | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | մանկավարժական լաբորատորիա>> ներդպրոցական միավորում՝ տնօրենի ղեկավարությամբ: Միավորման նիստերը գումարել ոչ ուշ, քան 2 ամիսը մեկ անգամ: Միավորումում ընդգրկել 5-9 հմուտ, իրենց աշխատանքին ստեղծագործաբար մոտեցող, հեղինակություն ունեցող ուսուցիչներ: | | միավորման անդամներ | |
| 7 | Ուշադրության կենտրոնում պահել սկսնակ ուսուցիչներին: Նրանց համար կազմակերպել մեթոդամանկավարժական օգնություն: | ուստարվա ընթացքում | Ա.Մինասյան առարկայական մասնախմբի նախագահներ | |
| 8 | Ապահովել ուսուցման արդյունքների ստուգման և գնահատման տասը միավորանի սանդղակի մեթոդական ցուցումների կիրառումը: Անհրաժեշտության դեպքում ստեղծել թեմատիկ հարցաշարեր / հարցաշարերի բանկ/ և հաճախ 6-12-րդ դասարաններում աշակերտների գիտելիքները ստուգել նաև համակարգիչների միջոցով: Կիսամյակի ընթացքում տարրական, միջին և ավագ դպրոցներում առնվազն երկու անգամ բոլոր առարկաներից կազմակերպել թեմատիկ ստուգումներ՝ տնօրինության ներկայացուցչի կամ առարկայական մասնախմբի նախագահի մասնակցությամբ: | ուստարվա ընթացքում | տնօրինություն, առարկայական մասնախմբի նախագահ, ուսուցիչներ | |
| 9 | Հարստացնել դպրոցի լաբորատորիաները: Հետևել, որպեսզի դասը հագեցված լինի զանազան ուսումնադիտողական նյութերով, լաբորատոր սարքավորումներով՝ կարևորելով տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների կիրառումը: | ուստարվա ընթացքում | տնօրինություն | |
| 10 | Բարձր դասարաններում պարբերաբար կազմակերպել բանավեճեր, քննարկումներ, կլոր սեղաններ, գիտագործնական կոնֆերանսներ և այլն, որոնք էլ ավելի կնպաստեն աշակերտների | ուտարվա ընթացքում | Ա.Մինասյան մասնախմբի նախագահներ, ուսուցիչներ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | ինքնակրթության և հոգևոր մտքի զարգացմանը: | | | |
| 11 | Ուսուցիչների համար ստեղծել դասախոսություններ, սեմինարներ: Այդ նպատակով հրավիրել բարձրորակ մասնագետներ այլ հաստատություններից, բուհերից, ԳԱ-ից, գիտահետազոտական ինստիտուտներից, ԳԹԿ-ից: | ուստարվա ընթացքում | Ա.Մինասյան | |
| 12 | Պահանջել, որպեսզի յուրաքանչյուր ուսուցիչ ուսումնական տարվա ընթացքում հանդես գա առնվազն մեկ մեթոդական-մանկավարժական, առարկայական բնույթի զեկուցումով: Այն քննարկել առարկայական մասնախմբում: | ուստարվա ընթացքում | Ա.Մինասյան | |
| 13 | Ուսումնասիրել հմուտ ուսուցիչների առաջավոր փորձը և տարածել դպրոցում: Այն իրականացնել << Հետազոտական դպրոց, մանկավարժական լաբորատորիա>> ներդպրոցական միավորման անդամների և առարկայական միավորումների նախագահների միջոցով: | մշտապես | Ա.Մինասյան | |
| 14 | Ստեղծել առաջավոր փորձի դպրոցներ, փնջային մեթոդ միավորումներ, ընդգրկել ինչպես ուսումնական հաստատության, այնպես էլ մարզի դպրոցների մանկավարժներին: Նպաստել մասնակցային և բազմակարծիք մշակույթի ձևավորմանը: | ուստարվա ընթացքում | տնօրինություն | |
| 15 | Մանկավարժական խորհրդում կարդացվելիք զեկուցումներ /նշել թեմաների վերնագրերը, ժամկետը և պատասխանատուի անունը/: Առնվազն՝ 5-6 զեկուցում: | ուստարվա ընթացքում | Ա.Մինասյան | |
| 16 | Կազմակերպել կոնսուլտացիոն պարապմունքներ աշակերտներին քննությունների նախապատրաստելու համար: | մայիս | Ա.Մինասյան | |
| 17 | Ժամանակին կազմել և հաստատել քննական հանձնաժողովները, փակցնել քննական կարգացուցակը՝ քննությունները սկսելուց առնվազն 10 օր առաջ: | մայիս | Ա.Մինասյան | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 18 | Ուսուցիչներին հաղորդակից դարձնել գիտության և մանկավարժության նորագույն նվաճումներին,ՏՀՏ միջոցների կիրառմանը,խրախուսել հեռավար դասընթացների գործիքակազմի տիրապետման համար վերապատրաստումների մասնակցությունը: | ընթացքում | տնօրինություն | |
| 19 | Ուսուցիչներին ժամանակին ծանոթացնել ՀՀ կառավարության որոշումներին, ՀՀ ԿԳՄՍ նախարարության հրամաններին, հրահանգներին և այլ նորմատիվ փաստաթղթերին: | ուստարվա ընթացքում | Ա.Մինասյան | |
| 20 | Կազմակերպել կոմպետեցիաների զարգացմանը ուղղված դասեր: Յուրաքանչյուր առարկայական մասնախմբից ուսումնասիրել 2-3 ուսուցչի աշխատանքային գործունեությունը, արդյունքները քննարկել տնօրինության ներսում: Հասնել այն բանին, որ մանկավարժական ողջ կոլեկտիվը իր գործունեությամբ բավարարի ուսուցիչներին ներկայացվող պահանջները: | ուստարվա ընթացքում | Ա.Մինասյան | |

## Ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպումը
## Բաժին 3

| | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետ | Պատասխանատու | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | Ուսուցիչներին ժամանակին ապահովել ուսումնական ծրագրերով և երաշխավորված մեթոդական ուղեցույցներով: | օգոստոս | Ա.Մինասյան առարկայական մասնախմբեր | |
| 2 | Ուսումական առարկաների դասավանդումը բավարարելու նպատակով ուսուցումը կազմակերպել **հնարավորության դեպքում** կաբինետային համակարգով, հարստացնել դպրոցի ուսումնանյութական բազան, օգտագործել առկա տեխնիկական միջոցների ողջ հզորությունը: | ուստարվա ընթացքում | Ա.Մինասյան | |
| 3 | Աշխատանք տանել կաբինետները | օգոստոս | Ա.Մինասյան | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | և դասարանները անհրաժեշտ նյութերով ու սարքավորումներով կահավորելու ուղղությամբ: | սեպտեմբեր | | |
| 4 | Ուսուցիչների համար կազմակերպել համակարգչային դասընթացներ, նրանց սովորեցնել համակարգչով աշխատել: | ուստարվա ընթացքում | Ա.Մինասյան Լ.Մինասյան Մ.Աղամալյան | |
| 5 | Ստուգել <<Մասնագիտական զարգացման դպրոց>>՝ աշակերտների մասնագիտական կողմնորոշումը ճիշտ նպատակաուղղելու համար: | ուստարվա ընթացքում | Ա.Մինասյան | |
| 6 | Սովորողների կրթության որակը բարձրացնելու նպատակով կատարել նպատակային դասալսումներ, արդյունքները քննարկել, տալ հանձնարարություններ և առաջադրանքներ: | ուստարվա ընթացքում | Ա.Մինասյան մ/մ նախագահներ | |
| 7 | Կատարել առարկայական ուսումնասիրություններ. արդյունքները քննարկել առարկայական մասնխմբերի նիստերում, տնօրինության խորհրդակցություններում, մանկավարժական խորհրդում կամ կոլեկտիվի ժողովում: Ուսումնասիրել ա/առարկայի դրվածք /1-12-րդ դասարաններում/ բ/ՏՀՏ-ի օգտագործում դասերին գ/նոր ծրագրերի և չափորոշչային պահանջների իրականացումը: | ուստարվա ընթացքում | Ա.Մինասյան մասնախմբի անդամներ | |
| 8 | Ուսումնասիրել լաբորատոր գործնական աշխատանքների ծագած պահանջների կատարման ընթացքը բնագիտական առարկաներից: | դեկտեմբեր մայիս | Ա.Մինասյան | |
| 9 | Կազմակերպել առարկայական շաբաթներ, միամսյակներ: Առարկայական միամսյակներին ա/կազմակերպել ցերեկույթներ, բաց դասեր, բ/լույս ընծայել պատի թերթեր, գ/հրավիրել մասնախմբեր տարբեր ուսումնական հաստատություններից: | ուստարվա ընթացքում | Ա.Մինասյան մասնախմբի նախագահներ, ուսուցիչներ | |
| 10 | Ավագ դպրոցում անցկացնել գիտագործնական կոնֆերանսներ | հունվար ապրիլ | Ա.Մինասյան | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | աշակերտների և ուսուցիչների մասնակցությամբ: | | | |
| 11 | Անցկացնել դպրոցական օլիմպիադաներ: Առարկայական օլիմպիադաներին նախապատրաստվել ուս. տարվա սկզբից: | դեկտեմբեր | Ա.Մինասյան հանձնաժողով, մասնախմբերի նախագահներ | |
| 12 | Անցկացնել <<Գիտակների մրցույթ>>: | հոկտեմբեր մարտ | Ա.Մինասյան մ/մ նախագահ | |
| 13 | Հայտնաբերել օժտված երեխաներին, տալ առարկայական խոր և կայուն գիտելիքներ, մղել նրանց ստեղծագործական աշխատանքի: | ուստարվա ընթացքում | Ա.Մինասյան մասնախմբի նախագահներ, ուսուցիչներ | |
| 14 | Հիմք ընդունելով աշակերտների ցանկությունը և ծնողների համաձայնությունը՝ կազմակերպել նախասիրական պարապմունքներ տարբեր առարկաներից՝ կնքելով ծնողների հետ համապատասխան պայմանագիր: | ուստարվա ընթացքում | Ա.Մինասյան | |
| 15 | **Դասղեկական աշխատանք** Օգնել դասղեկներին կազմելու դաստիարակչական աշխատանքների աշխատանքային պլանը և ներկայացնել հաստատման | սեպտեմբե-րի սկիզբ | Լ. Ղազարյան | |
| ա/ | Դասղեկներից պահանջել՝ աշխատանքային պլանի հիմքում ամրագրել հետևյալ դրույթները. ստեղծել դասարանական ամուր կոլեկտիվ: Աշակերտներին տալ հայեցի դաստիարակություն, նրանց մեջ արթնացնել ազգային արժանապատվություն և հպարտություն: Դաստիարակության հիմքում դնել միջնակարգ հանրակրթական դպրոցի շրջանավարտի նկարագրի պահանջները: | ուստարվա ընթացքում | Ա.Մինասյան Լ.Ղազարյան դասղեկներ, դասվարներ | |
| բ/ | Շաբաթը մեկ անգամ անցկացնել դասղեկի ժամ և այն ծառայեցնել երեխաների բազմակողմանի դաստիարակության և մանկական առողջ կոլեկտիվի ձևավորման նպատակին: | ուստարվա ընթացքում | Լ.Ղազարյան դասղեկներ, դասվարներ | |
| գ/ | Հետևողական աշխատանքի միջոցով հնարավորինս | ուստարվա ընթացքում | Ա.Մինասյան Լ. Ղազարյան | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | նվազացնել անհարգելի բացակայությունները: | | Ն.Կարապետյան դասղեկներ | |
| դ/ | Կիսամյակը 1-2 անգամ հրավիրել դասարանական ծնողական ժողով: Ամուր հիմքի վրա դնել աշակերտ-դպրոց-ընտանիք կապը: Ծնողների համար կարդալ մանկավարժական թեմաներով զրույցներ: | ուստարվա ընթացքում | Լ. Ղազարյան դասղեկներ, դասվարներ | |
| ե/ | Յուրաքանչյուր դասարանում ստեղծել ծնողխորհուրդ /բաղկացած 3-5 հոգուց/, ապահովել ծնողխորհրդի մասնակցությունը ուսումնական գործընթացի կազմակերպմանը: | սեպտեմբեր | դասղեկներ, դասվարներ | |
| զ/ | Սահմանել բաց դռների օր, ապահովել ծնող-ուսուցչի կապը: | ուստարվա ընթացքում | Ա.Մինասյան Լ.Ղազարյան դասղեկներ | |
| 16 ա/ | **Գեղագիտական դաստիարակություն** Հետևողական աշխատանք տանել աշակերտների գեղագիտական դաստիարակության գործի բարելավման ուղղությամբ: | ուստարվա ընթացքում | Ա.Մինասյան Լ. Ղազարյան Ն.Կարապետյան դասղեկներ | |
| բ/ | Դպրոցում ստեղծել տնօրինությանը կից գեղագիտական դաստիարակության խորհուրդ: | սեպտեմբեր | Ա.Մինասյան Լ. Ղազարյան Ն.Կարապետյան | |
| գ/ | Սովորողների օգնությամբ ձևավորել շենքի միջանցքներն ու կաբինետները, կազմակերպել գեղարվեստական օլիմպիադաներ, հաշվետու համերգներ: | ուստարվա ընթացքում | Ա.Մինասյան Լ. Ղազարյան Ն.Կարապետյան | |
| դ/ | Կանաչապատել դասասենյակներն ու միջանցքները: Ստեղծել վահանակներ: | սեպտեմբեր | Լ. Ղազարյան Ն.Կարապետյան Ս.առաքելյան | |
| 17 ա/ | **Ֆիզիկական դաստիարակություն** Սովորողների ֆիզիկական դաստիարակության բարելավման նպատակով մարզադահլիճը հնարավորության պայմաններում հարստացնել մարզական գույքով: | օգոստոս սեպտեմբեր | Ա.Մինասյան Ն.Իվանյան | |
| բ/ | Կանոնավոր կերպով անցկացնել առավոտյան լիցքային վարժությունները առողջարարական դասամիջոցներ և մարմնամարզական րոպեներ: | ուստարվա ընթացքում | Լ.Ղազարյան Ն.Իվանյան | |
| գ/ | Ստեղծել մարմնամարզական խմբակներ տարբեր մարզաձևերից: | սեպտեմբեր | Ն.Իվանյան ուսուցիչներ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| դ/ | Համայնքի բժշկի միջոցով պարզել աշակերտների առողջական վիճակը, ստեղծել ֆիզկուլտուրայից հատուկ խմբեր, հետևել պարապմունքների անցկացմանը: | սեպտեմբեր | Լ. Ղազարյան | |
| ե/ | Կահավորել բուժկաբինետը, ձեռք բերել անհրաժեշտ դեղամիջոցներ: | սեպտեմբեր | Լ.Մկրտումյան /համայնքի բուժքույր/ | |
| զ/ | Կազմակերպել սպորտլանդիաներ կրտսեր և միջին դպրոցում: | նոյեմբեր ապրիլ | Ն.Իվանյան | |
| է/ | Պարբերաբար կազմակերպել աշակերտների կողմից մարզական նորմատիվների հանձնում: | սեպտեմբեր մայիս | Լ. Ղազարյան Լ.Մկրտումյան /համայնքի բուժքույր/ | |
| ը/ | Անցկացնել միջդասարանական միջդպրոցական միջոցառումներ: Այն կազմակերպել բարձր մակարդակով, նախապես իրազեկ դարձնել դասղեկներին և աշակերտներին: | հոկտեմբեր մայիս | Լ.Ղազարյան Ն.Իվանյան դասղեկներ | |
| թ/ | Ուժեղացնել դպրոցական բուժանձնակազմի աշխատանքների վերահսկողությունը, ստեղծել բժշկական միջոցառումների իրականացման առավելագույն հնարավորություններ /բուժստուգումների ժամանակին անցկացում, հակաէպիդեմիոլոգիական աշխատանք: | ուստարվա ընթացքում | Ա.Մինասյան | |
| ժ/ | Խստորեն վերահսկել ֆիզկուլտուրայի դահլիճում, ուսումնական արհեստանոցներում, լաբորիատորիաներում անվտանգության և սանիտարական կանոնների պահպանմանը: | մշտապես | Ա.Մինասյան Լ.Ղազարյան ուսուցիչներ | |
| ի/ | Պարբերաբար հետևել ուսումնական գործընթացի հիգիենային, պահպանել դասացուցակների կազմման և տնային աշխատանքների ժամաբաշխման անհրաժեշտ պահանջները: | մշտապես | Լ. Ղազարյան | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| լ/ | Ուսումնական տարվա սկզբին և վերջում մանկավարժական խորհրդի նիստում լսել համայնքի բուժքրոջ հաշվետվությունը աշակերտների առողջական վիճակի և բուժական միջոցառումների իրականացման արդյունքների մասին: | սեպտեմբեր մայիս | Լ.Մկրտումյան /բուժքույր/ | |
| խ/ | Բժշկի կամ բուժքրոջ միջոցով անցկացնել զրույց բարձր դասարանների սովորողների օրվա ռեժիմի, անձնական հիգիենայի մասին: | ուստարվա ընթացքում | Լ.Մկրտումյան /բուժքույր/ | |
| | Ուսումնական տարվա ընթացքում կազմակերպել <<Առողջության օր>>: Դպրոց հրավիրել բժիշկներ՝ տարբեր մասնագիտությունների գծով: Կազմակերպել զրույց-զեկուցումներ աշակերտների շրջանում: | ուստարվա ընթացքում | Ա.Մինասյան Լ.Ղազարյան Լ.Մկրտումյան /բուժքույր/ | |
| 18<br>ա/ | **Ռազմահայրենասիրական աշխատանք**<br>Կազմակերպել հանդիպումներ Հայրենական Մեծ պատերազմի վետերանների, հայկական բանակի հրամանների, Արցախի ինքնապաշտպանական մարտերի մասնակիցների հետ: | ուստարվա ընթացքում | Ա.Մինասյան Լ.Ղազարյան Ն.Կարապետյան | |
| բ/ | Այցելություն Հայրենական մեծ պատերազմում, Արցախի անկախության, Հայաստանի սահմանների պաշտպանության համար զոհված մարտիկների հուշարձաններին: | սեպտեմբեր մայիս | Լ.Ղազարյան Ն.Իվանյան դասղեկներ | |
| գ/ | Անցկացնել <<Քաղաքացիական պաշտպանության օրը դպրոցում>> միջոցառումները: Աշխատանք տանել ոչ ռազմականացված խմբավորումների հետ: | մշտապես | Ա.Մինասյան Լ.Ղազարյան Ն.Իվանայան | |
| 19<br>ա/ | Աշխատանքային դաստիարակություն<br>Բարձրացնել աշխատանքային ուսուցման, աշակերտների մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ տարվող աշխատանքների որակը: Կարգի բերել արհեստանոցները /մետաղամշակման, փայտամշակման, կարի, | ուստարվա ընթացքում | Ա.Մինասյան Ն.Կարապետյան<br><br>ուսուցիչներ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | խոհարարական: | | | |
| բ/ | Դպրոցամերձ հողամասի մշակման և ծառերի խնամքի աշխատանքները կատարել աշակերտների միջոցով, սեր արթնացնել դեպի աշխատանքը: | ուստարվա ընթացքում | ուսուցիչներ, այգեպան | |
| գ/ | Աշակերտների ուժերով կազմակերպել դպրոցում աճեցվող ծաղիկների խնամքի գործը: Հոգ տանել, որպեսզի ծաղիկներով ու կանաչ բույսերով կահավորեն կաբինետները, միջանցքներն ու սրահները: | ուստարվա ընթացքում | Ս.Առաքելյան Ք.Հակոբյան դասղեկներ | |
| 20 ա/ | **Գրադարանային աշխատանք** Օգնել գրադարանին կազմելու և հաստատման ներկայացնելու տարեկան աշխատանքային պլան: | օգոստոս | Ա.Մինասյան Ն.Կարապետյան | |
| բ/ | Դպրոցի հնարավորությունից ելնելով՝ հարստացնել գրադարանային ֆոնդը: Վերանորոգել գրադարանային ֆոնդում եղած դասագրքերն ու գրքերը: | ուստարվա ընթացքում, մշտապես | Ն.Կարապետյան Ս.Առաքելյան Լ.Ղազարյան | |
| գ/ | Կազմակերպել միջոցառումներ նշանավոր և հիշարժան տարելիցների վերաբերյալ: | ուստարվա ընթացքում | Ն.Կարապետյան Լ.Ղազարյան | |
| դ/ | Ստեղծել <<Պատանի ստեղծագործողի>> ակումբ: Նպաստել երեխաների ստեղծագործական մտքի զարգացմանը: Ի հայտ բերել տաղանդավոր աշակերտներին: | ուստարվա ընթացքում | Լ.Մինասյան Ն.Կարապետյան Լ.Ղազարյան | |
| ե/ | Աշակերտներին բաժանորդագրել մանկապատանեկան ամսագրերին: | ուստարվա ընթացքում | Ն.Կարապետյան դասղեկ | |
| զ/ | Ստեղծել թեմատիկ քարտարարներ, ղեկավարել կրտսեր դպրոցի ընթերցանությունը: | ուստարվա ընթացքում | Ն.կարապետյան | |
| է/ | Դասագրքերով ապահովել աշակերտներին, մշակել համապատասխան փաստաթղթեր: | սեպտեմբեր | Ա.Մինասյան Ն.Կարապետյան | |

## Ներդպրոցական վերահսկողության համակարգ

## Բաժին 4

| | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման | Պատասխանատու | Ծանոթություն |
|---|---|---|---|---|

| | | ժամկետ | | |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | Յուրաքանչյուր շաբաթվա վերջում գումարել տնօրինության նիստ, վերլուծել շաբաթական պլանները.<br>ա/ Լսել տնօրինության անդամների հաղորդումը շաբաթական պլանների կատարողականի մասին: Բացահայտել աշխատանքում տեղ գտած թերությունները:<br>բ/ Քննարկել հաջորդ շաբաթվա աշխատանքային ծրագրերը: | ուստարվա ընթացքում | Ա.Մինասյան | |
| 2 | Ուսումնական տարվա սկզբից ունենալ ուսուցիչների բացակայությունների հաշվառման մատյան: | ուստարվա ընթացքում | Ա.Մինասյան | |
| 3 | Հետևել, որ դասաժամերի բացթողումները լրացվեն լրացուցիչ պարապմունքների միջոցով: | մշտապես | Ա.Մինասյան | |
| 4 | Ուսումնական տարվա սկզբից կատարել աշխատանքի բաժանում որոշակի դարձնելով յուրաքանչյուրի աշխատանքի շրջանակները: | օգոստոսի վերջ | Ա.Մինասյան | |
| 5 | Ստուգել և հաստատել ծրագրային նյութերի թեմատիկ պլանավորումները: | սեպտեմբերի սկիզբ | Ա.Մինասյան | |
| 6 | Յուրաքանչյուր ամսվա վերջին տնօրինության նիստին քննարկել սովորողների հաճախումների հարցը: | մշտապես | Ա.Մինասյան<br>Լ.Ղազարյան | |
| 7 | Ստուգել պարտադիր կրթության օրենքի սահմանադրական պահանջի կատարման վիճակը դպրոցում և արդյունքները քննարկել տնօրինության նիստում կամ մանկավարժական խորհրդում: | սեպտեմբեր | Ա.Մինասյան<br>Լ.Ղազարյան | |
| 8 | ա/ Ավարտական դասարանների սովորողների գիտելիքներին, կարողություններին ու հմտություններին ծանոթանալու համար նպատակով տարեկան 2 անգամ անցկացնել թեմատիկ գրավոր աշխատանքներ:<br>բ/ Գրավոր աշխատանքների արդյունքները քննարկել առարկայական մասնախմբերում և | դեկտեմբեր<br>ապրիլ<br><br>դեկտեմբեր<br>ապրիլ | Ա.Մինասյան<br>Լ.Ղազարյան<br>մասնախմբի նախագահ<br><br>տնօրեն,<br>մասնախմբի նախագահ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | մանկավարժական խորհրդի նիստում: | | | |
| 9 | Ստուգել լաբորատոր և գործնական աշխատանքների կատարման վիճակը բնագիտական առարկաներից: | հոկտեմբեր ապրիլ | Ա.Մինասյան Լ.Ղազարյան | |
| 10 | Ստուգել տարբեր առարկաներից տրված ուսուցողական և թեմատիկ աշխատանքների քանակը և որակը: Արդյունքները քննարկել մանկավարժական խորհրդի նիստում: | կիսամյակի վերջում | Ա.Մինասյան Մասնախմբի ղեկավարներ | |
| 11 | Ստուգել ուսումնական ծրագրերի կատարողականը և արդյունքները քննարկել տնօրինության ընդլայնված նիստերում: | դեկտեմբեր ապրիլի սկիզբ | Ա.Մինասյան մասնախմբի ղեկավար | |
| 12 | Ստուգել դասամատյանների, տետրերի վարման վիճակը: | շաբաթը՝ մեկ անգամ | Լ. Ղազարյան դասղեկներ | |
| 13 | Ստուգել դժվար առաջադիմող աշակերտների հետ տարվող աշխատանքները, քննարկել տնօրինության ընդլայնված նիստերում: | հոկտեմբեր մարտ | Լ. Ղազարյան դասղեկներ | |
| 14 | Գիտելիքների ստուգում կազմակերպել տարրական դպրոցում /4-րդ դասարաններում/: | դեկտեմբեր ապրիլ | Ա.Մինասյան | |
| 15 | Ուսումնասիրել դասղեկների կատարած աշխատանքները: Արդյունքները քննարկել դասղեկների մեթոդմիավորումում, տնօրինության ընդլայնված նիստերում: | ուստարվա ընթացքում | Լ. Ղազարյան | |

## Աշխատանք ծնողների հետ
## Բաժին 5

| | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետ | Պատասխանատու | Ծանոթություն |
|---|---|---|---|---|

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 1 | Հրավիրել դասարանական ծնողական ժողովներ: | սեպտեմբեր | Լ. Ղազարյան դասղեկներ | |
| 2 | Նախատեսել ընդհանուր ծնողական ժողով և քննարկել դպրոցի առջև ծառացած համատեղ լուծման ենթակա հարցերը: | ուստարվա ընթացքում | Ա.Մինասյան ծնողխորհրդի նախագահ, դասղեկներ | |
| 3 | Ծնողական համայնքի աջակցությամբ լուծել դասարաններում իրականացվող վերանորոգման աշխատանքների հարցը /աշխատուժ/ | սեպտեմբեր ուստարվա ընթացքում | Ա.Մինասյան ծնողական խորհուրդ, կառավարման խորհուրդ, | |
| 4 | Կազմակերպել ծնողների համար անցկացվող զեկույցների և զեկուցումների թեմատիկ պլան: | սեպտեմբեր | Ա.Մինասյան Լ.Ղազարյան | |
| 5 | Պլանավորել ծնողական խորհրդի աշխատանքները: | սեպտեմբեր | Ա.Մինասյան ծնողխորհուրդ | |
| 6 | Նպաստել ծնողական  խորհուրդի գործունեությանը: | ուստարվա ընթացքում | Ա.Մինասյան | |
| 7 | Ապահովել դպրոցի և ծնողների համատեղ գործունեությունը սովորողների ուսուցման ու դաստիարակության բարելավման գործում: | ուստարվա ընթացքում | Ա.Մինասյան | |
| 8 | Ծնողներին մասնակից դարձնել սովորողների արտադպրոցական, դաստիարակչական աշխատանքներին: | մշտապես | Լ.Ղազարյան | |

## Ֆինանսական գործունեություն և ուսումնանյութական բազայի ամրապնդում
## Բաժին 6

| | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետ | Պատասխանատու | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | Կազմել  տարիֆիկացիա: | սեպտեմբեր | Ա.Մինասյան | |
| 2 | Կազմել ծախսերի նախահաշիվ, քննարկել դպրոցի խորհրդում և ներկայացնել մարզպետարանի ֆինանսական բաժին: | ուստարվա ընթացքում | Ա.Մաշուրյան դպրոցական խորհուրդ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 3 | Արտաբյուջետային ծախսերի նախահաշիվը համաձայնեցնել դպրոցի կառավարման խորհրդի հետ: | ուստարվա ընթացքում | Ա.Մինասյան | |
| 4 | Ժամանակին դիմել մարզպետարանին և տեղական ինքնակառավարման մարմիններին՝ շենքի վերանորոգման, գույքի ձեռք բերման նպատակով համապատասխան ֆինանսավորում ստանալու համար: | ուստարվա ընթացքում | Ա.Մինասյան | |
| 5 | Աշխատանք տանել դպրոցական գույքի, սարքավորումների, ուսումնական տեխնիկական միջոցների, դիդակտիկ պարագաների և այլ նյութերի օգտագործման և պահպանման ուղղությամբ: | ուստարվա ընթացքում | տնօրենություն | |
| 6 | Կատարել դպրոցի հաշվեկշռում եղած գույքի ու սարքավորումների հաշվառում: | նոյեմբեր | տնօրենություն | |
| 7 | Ապահովել շենքի ջերմային, լուսային և օդային ռեժիմը: Կանոնավոր վիճակում պահել հակահրդեհային միջոցները: | ուստարվա ընթացքում | տնօրենություն | |
| 8 | Բարեկարգ վիճակում պահել դպրոցի շենքի բակը, մարզահրապարակը: Հետևել անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանմանը: | ուստարվա ընթացքում | Հ.Գալստյան | |
| 9 | Աշխատանք տանել կաբինետների և լաբորատորիաների կահավորման, հարստացման, եղած գույքն ու սարքավորումներն արդյունավետ օգտագործելու ուղղությամբ: | մշտապես | Կաբինետների և լաբորատորիայի վարիչներ: | |
| 10 | Հսկողություն սահմանել սովորողների սննդի կազմակերպման նկատմամբ: | ուստարվա ընթացքում | Ա.Մինասյան ծնողխորհուրդ | |
| 11 | Հետևել դպրոցի ջեռուցման ներքին ցանցի անխափան աշխատանքին: | ուստարվա ընթացքում | Հ.Գալստյան | |
| 12 | Պլանավորել ու կազմել առաջիկա տարվա բյուջեի նախագիծը և գործընթացը: | Սեպտեմբերի 1-20 Սեպտեմբերի 21-նոյեմբերի 15 | Ա.Մինասյան | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | Նոյեմբերի 15-դեկտեմբերի 15 | | |

## Կազմակերպական _ մանկավարժական աշխատանք
## Բաժին 7

| | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետ | Պատասխանատու | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | Ելնելով շենքային պայմաններից ուսումնական պարապմունքները կազմակերպել մեկ հերթով.<br>I հերթ<br>ա/ I -XIIդասարաններ<br>բ/ ֆակուլտատիվ պարապմունքներ և առարկայական խմբակներ: | ուստարվա ընթացքում | Ա.Մինասյան | |
| 2 | Կոմպլեկտավորել հետևյալ դասարանները<br>ա/ կրտսեր դպրոց I-IV դասարաններ<br>բ/ հիմնական դպրոց V-IX դասարաններ<br>գ/ ավագ դպրոց X-XII դասարաններ | ուստարվա ընթացքում | Ա.Մինասյան | |
| 3 | Նշանակել դասղեկներ և դասվարներ: | օգոստոս | Ա.Մինասյան | |
| 4 | Նշանակել ուսումնական կաբինետների վարիչ: | օգոստոս | Ա.Մինասյան | |
| 5 | Նշանակել և մանկավարժական խորհրդին ներկայացնել առարկայական մասնախմբերի նախագահներին: | 20.08-31.08 | Ա.Մինասյան մանկավարժական խորհուրդ | |
| 6 | Նշանակել և հրամանագրել դասղեկներ, արտադասարանական վճարովի խմբակների ղեկավարներ: | օգոստոս | Ա.Մինասյան | |
| 7 | Ստեղծել աշխատանքային բարենպաստ պայմաններ վերը նշված կառույցներում աշխատանքները նորմալ կազմակերպելու համար: | մշտապես | Ա.Մինասյան | |
| 8 | Ուսումնական մասնաշենքի յուրաքանչյուր հարկում, բակում, ձևավորված սրահներում կազմակերպել ամենօրյա | մշտապես | Լ.Ղազարյան | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | հերթապահություն: | | | |
| 9 | Նշանակել ավագ հերթապահներ, պահանջել հերթապահներից՝<br>•Հսկել և իրականացնել օրվա հերթապահությունը ուսումնական մասնաշենքերում:<br>•Կազմակերպել տվյալ օրվա ուսումնական ողջ գործընթացը:<br>•Օրվա վերջում աշխատանքային գործընթացի մասին զեկուցել տնօրենին: | մշտապես | Լ. Ղազարյան | |
| 10 | Սահմանել կարգ<br>1.Յուրաքանչյուր աշխատող աշխատանքի ներկայանա դասերն սկսելուց 15 րոպե առաջ՝ ըստ <<Աշխատանքային ժամանակացույցի>>՝ հիմք ընդունելով <<Ներքին կարգապահական կանոնները>>:<br>Ուսուցիչների հաճախումների հաշվառման պարտականությունները դնել փոխտնօրենի վրա: | մշտապես | Ա.Մինասյան<br>Լ.Ղազարյան | |
| 11 | Սահմանել վարչասպասարկող անձնակազմի աշխատանքային ռեժիմ:<br>✳Արտահայտել <<Աշխատանքային ժամանակացույցում>>: | ուստարվա ընթացքում | Ա.Մինասյան | |
| 12 | Հետևել, որպեսզի դասղեկները պատասխանատվություն կրեն գույքի և անվտանգության կանոնների պահպանման համար: | ուստարվա ընթացքում | Ա.Մինասյան | |
| 13 | Դպրոցական շենքի պահպանման, տնտեսական կարիքները հոգալու, հակահրդեհային միջոցառումները իրականացնելու պատասխանատվությունը դնել տնտեսվարի վրա: | մշտապես | Հ.Գալստյան | |
| 14 | Դպրոցական շենքը էլեկտրական հոսանքով ապահովելու, էլեկտրական գծերն ու սարքավորումները անվտանգ պահելու պատասխանատվությունը դնել դպրոցի տնտեսվարի վրա: | մշտապես | Հ.Գալստյան | |
| 15 | Դպրոցամերձ հողամասի ծառերի պահպանման և խնամքի աշխատանքները դնել տնտեսվարի վրա: | մշտապես | Հ.Գալստյան | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 16 | Դասասենյակները, կաբինետները, ուսումնական գույքը և սարքավորումները նախապատրաստել նոր ուստարվան: | օգոստոս | դասղեկներ | |
| 17 | Վերանորոգել աշակերտական դասագրքերը | հունիս օգոստոս | դասղեկներ Ն.Կարապետյան | |
| 18 | Ձևավորել դասամատյանները: | օգոստոս | Լ. Ղազարյան | |
| 19 | Անցկացնել տնօրենին կից խորհրդակցություններ յուրաքանչյուր շաբաթ: | շաբաթը մեկ անգամ | Ա.Մինասյան | |
| 20 | Կազմակերպել աշակերտների ինքնակառավարման աշխատանքները ըստ դպրոցի աշակերտական խորհրդի կանոնադրության | սեպտեմբեր | Լ. Ղազարյան | |
| 21 | Համալրել ուսուցչական կազմը և կատարել դասաբաշխում: | օգոստոս | Ա.Մինասյան | |
| 22 | Հաշվառել գրադարանային ֆոնդի օգտագործման պիտանի դասագրքերը: | հունիս | Ն.Կարապետյան | |
| 23 | Օգտագործման ենթակա դասագրքերը վարձույթով տալ ծնողներին, այդ նպատակի համար մշակել գիրքը վարձույթով ծնողին տալու համապատասխան պայմանագիր: | օգոստոս սեպտեմբեր | Ն.Կարապետյան | |
| 24 | Դասղեկների հետ վերջնականապես ճշտել սոցիալապես անապահով, երկկողմանի և միակողմանի ծնողազուրկ երեխաների ցուցակը : | սեպտեմբեր | Լ. Ղազարյան դասղեկ, ծնողխորհրդի նախագահ | |
| 25 | Կազմակերպել կոնսուլտացիոն պարապմունքներ ամառային առաջադրանքներ ստացած աշակերտների հետ, ժամանակին և կազմակերպված ընդունել ամառային առաջադրանքները: | 10.08-20.08<br>20.08-30.08 | Լ. Ղազարյան | |
| 26 | Դպրոցական շենքը նախապատրաստել նոր ուսումնական տարվան: | 25.08-30.08 | Ա.Մինասյան Հ.Գալստյան | |

## Մանկավարժական խորհրդի գործունեությունը
## Բաժին 8

| | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման | Պատասխանատու | Ծանոթություն |
|---|---|---|---|---|

| | | ժամկետ | | |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | Մանկավարժական խորհրդի կազմի հաստատում | օգոստոս | մանկխորհ | |
| 2 | Համադպրոցական ուսումնադաստիարակչական աշխատանքների զարգացման տարեկան ծրագրի (պլանի) մասին | օգոստոս | մանկխորհ | |
| 3 | Ներքին գնահատման հաշվետվություն | օգոստոս | մանկխորհ | |
| 4 | Համադպրոցական միջոցառումների պլանի. Ներքին աշխատանքային կանոնների և աշխատանքային շաբաթվա տևողության կանոնակարգի մասին | օգոստոս | մանկխորհ | |
| 5 | Հաստատության պետական շափորոշչին համապատասխան ուսումնական հիմնական ծրագրերի իրագործման խնդիրների մասին | օգոստոս | մանկխորհ | |
| 6 | Ուսպլանի քննարկում և հաստատում, դասաբաշխում , դպրոցական պարտադիր ժամաքանակի բաշխում | օգոստոս | մանկխորհ | |
| 7 | Դասարանների համակարգի հաստատում | օգոստոս | մանկխորհ | |
| 8 | Դասվար – դասղեկների , առարկայական մեթոդմիավորումներին նախագահների հաստատում | օգոստոս | մանկխորհ | |
| 9 | Տարիֆիկացիոն հանձնաժողովի ստեղծում | օգոստոս | մանկխորհ | |
| 10 | Դպրոցի մանկավարժական կոլեկտիվի կատարած աշխատանքների հաշվետվություն և նոր խնդիրներ | օգոստոս | մանկխորհ | |
| 11 | Տնօրենի, տնօրենի տեղակալների, մանկապատանեկան կոլեկտիվի կազմակերպչի, հոգեբանի տարեկան աշխատանքային պլանների քննարկում և հաստատում | օգոստոս | մանկխորհ | |
| 12 | Առարկայական խմբակների ղեկավարների հաստատում | օգոստոս | մանկխորհ | |
| 13 | Հաստատության բյուջեի պլանավորման նախագծի քննարկում | օգոստոս | մանկխորհ | |
| | | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 14 | Սոցիալապես անապահով երեխաներին պետբյուջեից տրամադրված գումարի չափով անվճար գրքեր տրամադրելու մասին | հոկտեմբեր | մանկխորհ | |
| 15 | Մեթոդական զեկույց՝ <<Մշակութային պատերազմ>> թեմայով | հոկտեմբեր | մանկխորհ | |
| | | | | |
| 16 | Սովորողների գիտելիքների ստուգման , պետական ավարտական քննությունների կազմակերպման և անցկացման մասին | դեկտեմբեր | մանկխորհ | |
| 17 | Հաստատության XII դասարանի աշակերտներին պետական ավարտական քննություններին թույլատրելու հարցը | դեկտեմբեր | մանկխորհ | |
| | | | | |
| 18 | I կիսամյակի ուսման առաջադիմության ամփոփում | դեկտեմբեր | մանկխորհ | |
| 19 | I կիսամյակի ծրագրի կատարողականի ամփոփում | դեկտեմբեր | մանկխորհ | |
| 20 | I կիսամյակի դաստիարակչական աշխատանքների ամփոփում | դեկտեմբեր | մանկխորհ | |
| 21 | Մեթոդմիավորումների I կիսամյակի աշխատանքների ամփոփում | դեկտեմբեր | մանկխորհ | |
| 22 | Տնօրինության կողմից տրվող գրավոր աշխատանքների ամփոփում | դեկտեմբեր | մանկխորհ | |
| 23 | XII դասարանի II կիսամյակի ուսպլանի մասին | դեկտեմբեր | մանկխորհ | |
| | | | | |
| 24 | Հայաստանի Հանրապետության և մայիսյան հերոսամարտերի 100-ամյակին նվիրված միջոցառումների անցկացման ասին | փետրվար | մանկխորհ | |
| 25 | Առարկայական օլիմպիադաների արդյունքների ամփոփում, տարածաշրջանային փուլին հաղթող աշակերտների մասնակցության մասին | փետրվար | մանկխորհ | |
| | | | | |
| 26 | Ուսուցման բովանդակության , սովորողների ուսումնառության որակի, նրանց հետ տարվող արտադասարանական և | ապրիլ | մանկխորհ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | արտադպրոցական աշխատանքների կազմակերպման հարցեր | | | |
| 27 | Լսել զեկուցում՝ <<Հեռավար ուսուցման մեթոդաբանությունը>> թեմայով | ապրիլ | մանկխորհ | |
| | | | | |
| 28 | Ուսումնական տարվա ընթացքում 120-200 ժամ դասերից բացակա ունեցող II – XII դասարանների աշակերտներին հաջորդ դասարան փոխադրելու կամ հաստատությունից դուրս թողնելու հարցը | մայիս | մանկխորհ | |
| 29 | Տնօրինության տրվող գրավորների արդյունքների ամփոփում | մայիս | մանկխորհ | |
| 30 | Հիմնական և ավագ դպրոցների փոխադրական դասարաններում ուսման առաջադիմության ամփոփման , հաջորդ դասարաններ փոխադրելու ամառային առաջադրանքներ տալու , նույն դասարան թողնելու , ինչպես նաև գերազանց առաջադիմություն ունեցող աշակերտներին ՀՀ ԿԳՆ գովասանագրերով պարգևատրելու մասին | մայիս | մանկխորհ | |
| 31 | Հիմնական և ավագ դպրոցների ավարտական IV, IX և XII դասարանների սովորողների գիտելիքների ստուգման , պետական ավարտական քննություններին թույլատրելու մասին | մայիս | մանկխորհ | |
| 32 | Ծրագրի կատարողականի ամփոփում | մայիս | մանկխորհ | |
| 33 | Ներառական կրթության ամփոփում | մայիս | մանկխորհ | |
| | | | | |
| 34 | Հիմնական և ավագ դպրոցների ավարտական դասարաններում գիտելիքների ստուգումների, պետական ավարտական քննությունների ամփոփում, ավարտական փաստաթղթերի մասին | հունիս | | |
| 35 | Հաստատության ուսումնադաստիարակչական | հունիս | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | աշխատանքների զարգացման տարեկան ծրագրի արդյունքների ամփոփիչ հաշվետվության քննարկում | | | |

## Ներառական կրթություն

| № | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Պատասխանատու անձ | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1. | Ներառական կրթությունը որպես նպատակ ամրագրել հաստատությունում գործող բոլոր օղակներում: | Տարվա ընթացքում | Ա.Մինասյան | |
| 2. | Ուշադրություն դարձնել ներառական կրթության ապահովմանն ուղղված համապատասխան միջոցառումներին , այդ թվում ուսուցիչների, ուսուցիչների օգնականների վերապատրաստումներին: | Տարվա ընթացքում | Ա.Մինասյան | |
| 3. | Իրականացնել երեխաների հավասար իրավունքներին, հանդուրժողականությանը նվիրված և նման այլ ուսումնական ծրագրեր: | Տարվա ընթացքում | Ա.Մինասյան | |
| 4. | Վերահսկողություն իրականացնել ԿԱՊԿ ունեցող սովորողների բազմամասնագիտական թիմի աշխատանքներին: | Տարվա ընթացքում | Ա.Մինասյան | |
| 5. | ԿԱՊԿ ունեցող սովորողներին ապահովել դասագրքերով, գրենական պիտույքներով, հարմարանքներով , այլ պարագաներով: | Տարվա ընթացքում | Ա.Մինասյան | |
| 6. | Ապահովել համապատասխան ուսումնամեթոդական նյութեր և սարքավորումներ: | Տարվա ընթացքում | Ա.Մինասյան | |
| 7. | ԱՈՒՊ-ները մշակել համաձայն հանրակրթական պետական չափորոշչի և առարկայան ծրագրերի, հաշվի առնելով սովորողների կարիքները հնարավորությունները, ձեռքբերումները և առաջընթացը: | Տարվա ընթացքում | Ա.Մինասյան | |
| 8. | Ապահովել ԿԱՊԿ երեխաների մասնակցությունը համադպրոցական միջոցառումներին: | Տարվա ընթացքում | Ա.Մինասյան | |

## Դպրոցի զարգացման կոմպլեքս պլան
## Դպրոցի հիմնական նպատակը

1. Դաստիարակել համակողմանի զարգացած ու ազգային հոգով լեցուն, առողջ հոգեբանությամբ սերունդ:
2. Ձևավորել հատուկ վերաբերմունք մայրենի լեզվի նկատմամբ՝ զուգակցելով համազգային արժեքները:
3. Դպրոցում ստեղծել աշխատանքային բարենպաստ պայմաններ աշակերտների մտավոր և ֆիզիկական ընդունակությունների և աշակերտների՝ որպես հաստատության անդամ ձևավոնելու համար:

## Դպրոցի աշխատանքի սկզբունքը

Ուսուցիչների գիտամեթոդական մակարդակի, մեթոդական աշխատանքի նպատակաուղվածության բարձրացման նպատակով տվյալ ուստարում կոլեկտիվը պետք է աշխատի հետևյալ պրոբլեմների լուծման ուղղությամբ:

**Աշակերտներին սովորեցնել սովորել.**

Ամեն աշակերտի զինել խոր և ամուր գիտելիքներով դասապրոցեսի արդյունավետության բարձրացման ճանապարհով /կիրառել ժամանակակից ձևեր ու միջոցներ/: Ուսման ընթացքում դաստիարակել բարոյականության նորմեր: Տարբեր մեթոդների օգտագործումը աշխատանքի մեջ համարել գլխավոր ուղղություն և աշխատել ամեն ինչ անել դասը հետաքրքիր դարձնելու համար:

**Բոլոր ուսուցիչների կողմից.**

1. Հանրակրթական չափորոշիչների պահանջների ծանոթացում և կատարում:
2. Դպրոցի հետագա զարգացում բոլոր ուղղություններով:
3. Ուսուցումը և դաստիարակությունը ավելի բազմակողմանի դարձնելու նպատակով ծանոթանալ գիտության նվաճումներին և համապատասխան ծրագրերին:
4. Ապահովել ուսուցիչների ներգրավվածությունը հեռավար ուսուցման դասընթացներ կազմակերպելու գործիքակազմի տիրապետելու համար:

## Դպրոցի կրթադաստիարակչական համակարգի չափորոշիչներով ներկայացվող պահանջները

Դպրոցի յուրաքանչյուր ուսուցիչ պարտավոր է.

Սովորողներին զինել այն անհրաժեշտ գիտելիքներով, կարողություններով և հմտություններով, որ մարդկությունը կուտակել է դարերի ընթացքում և որոնց պետք է տիրապետել բնության և հասարակական կյանքի մասին իմանալը անհրաժեշտ է, ձևավորել նրանց աշխարհայացքը և նպաստել նրանց հասուն անձնավորություն ու վառ անհատականություն ձևավորելուն:
Իրականացնել անձի համակողմանի դաստիարակություն, որի արդյունավետության համար հարևոր է դաստիարակության բաղադրամասերի մտավոր, բարոյական, ֆիզիկական, գեղագիտական, աշխատանքային, իրավական, տնտեսագիտական, քաղաքացիական, բնապահպանական դաստիարակության միասնությունը: Շեշտը դնել անհատականությունների ձևավորման և սոցիալական դաստիարակության վրա՝ ուշադրություն դարձնելով ազգային և համամարդկային արժեքներին, մշակույթին, կրոնին, տնտեսությանը և բնապահպանությանը: Նպաստել և օժանդակել խաղաղության ,մարդու իրավունքների հանդուրժողականության, միջազգային և միջմշակութային փոխըմբռնման, համերաշխության և համագործակցության, ժողովրդական գործընթացների ամրապնդմանը: Հայ երեխային դաստիարակել ազգային ոգով՝ ոչ միայն կրթությունը մայրենի լեզվով իրագործելու, այլև համամարդկային արժեքներին զուգընթաց, յուրացմամբ, ազգային ոգու, մտածելակերպի հոգեբանության, վարքուբարքի արմատավորմամբ: Պատրաստել հայրենիքի վերածննդի համար անհրաժեշտ տնտեսական, գիտատեխնիկական, կրթական, մշակութային բոլոր հարցերը լուծելու ունակ սերունդ:

## 2023-2024 ուստարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների ամփոփում

Ուսումնադաստիարակչական աշխատանքների հսկողությունը իրականացվել է դասալսումների, արտադասարանական միջոցառումների, ուսուցողական և ստուգողական տետրերի, դասարանական մատյանների, բոլոր օղակներ պլանների ստուգման միջոցով, ռուսաց լեզվից, հայոց լեզվից, անգլերենից, մաթեմատիկայից, կարդալու տեխնիկայի ստուգման, լաբորատոր աշխատանքների և փորձերի միջոցով: Անցյալ տարվա ընթացքում լսվել և քննարկվել են դասաժամեր, կրտսեր, միջին և ավագ դպրոցում:
2022-2023 ուստարում առաջին դասարան ուսուցչուհու աշխատանք վերլուծությունը վկայում է երեխաների բավականին հաջող տառաճանաչության և աշակերտների գրագիտության, ուսուցման հմտությունների ուսուցիչների հմտության մասին: 2022-2023 ուստարում դպրոց են հաճախել 177 աշակերտ: Առաջադիմությունը կազմում է 100%, որակը՝43%: Դպրոցում գործել են ուսումնական դաստիարակչական բաժիններ:
Մանկավարժական կոլեկտիվի առջև կանգնած գլխավոր խնդիրը սովորողների ուսման որակի բարձրացումն է:
2022-2023 ուստարվա ընթացքում ժամանակին գումարվել են մանկավարժական խորհրդի նիստերը, մեթոդմիավորումների նիստերը, աշակերտական և ծնողական խորհուրդների նիստերը:
Դաստիարակչական աշխատանքների ուղղությամբ կատարվել են բազմաթիվ հետաքրքիր միջոցառումներ և շատ ուսուցիչներ արժանացել են պատվոգրերի:
Իրականացվել են հետևյալ միջոցառումները՝<< Գիտելիքի օր>>, <<Ուսուցչի տոն>>, <<Ոսկե աշուն>>, <<Յոթ հրաշալիք>>, <<Ամանորյա հանդեսներ>>, <<Զատիկ>>, <<Տյարն ընդառաջ>>, <<Սիրո, գեղեցկության, մայրության օրվան նվիրված գրական երաժշտական ցերեկույթ>>, << Երեխաների ձեռքի աշխատանքների ցուցահանդես միջոցառում>>, <<Հրավիրում ենք շնորհալիներին>>:

Հաստատության 6 շրջանավարտներից 1-ը ընդունվել է բարձրագույն ուսումնական հաստատություններ, դպրոցում չկան երկտարեցի երեխաներ, գերազանցիկների թիվը՝37:

## Դպրոցի մակավարժական կոլեկտիվի խնդիրները 2023-2024 ուստարում

1. Կարևորել ուսուցման 3 գլխավոր գործառույթների անհրաժեշտություն. կրթական /սովորեցնող/, զարգացնող և դաստիարակող:
2. Հասնել այն բանին, որ երեխաները յուրացնեն բնության, հասարակության, տեխնոլոգիայի մասին հիմնարար գիտելիքներ, ստեղծելով նրանց շարունակական կրթության համակարգում անհրաժեշտ պայմաններ:
3. Դպրոցը դարձնել ազգային և համամարդկային արժեքներին հաղորդակից, դաստիարակել աշակերտներին քաղաքացիական ու աշխարհայացքային որակներ ունեցող անհատ:

- Ամեն ուսուցիչ պետք է կատարելագործի ուսման հիմնական ձևը՝ դասը, բարձրացնելով նրա որակական մակարդակը, նրա գաղափարական ազդեցությունը աշակերտի վրա.
- Հասնել այն բանին, որ ամեն դաս ունենա պրակտիկ ուղվածություն, սերտ կապ լինի ժամանակակից կյանքի հետ, նպաստի երեխաների բազմակողմանի զարգացմանը: Հաշվի առնելով ուսպլանի, դասագրքի, ծրագրի փոփոխությունները:
- <<Հասարակագիտություն>> առարկան դասավանդել այնպես, որպեսզի դաստիարակվեն գիտակից, օրենքները իմացող քաղաքացիներ:
- Ելնելով մեր երկրում կատարվող այսօրվա փոփոխություններից և սոցիալ-տնտեսական պահանջներից՝ նոր հիմքերի վրա դնել աշխատանքային դաստիարակությունը, ուշադրություն դարձնելով աշխատանքի ուսուցման դասն ավելի պրակտիկ ու բովանդակալից, նպատակաուղղելով աշխատանքն ազգային արժեքների և արհեստների ուսուցման:
- Բարձրացնել պատասխանատվությունը աշակերտների մոտ ուսման որակի հանդեպ, ուսումնական և աշխատանքային կարգապահության համար ակտրվացնել նրանց՝ զարգացնելով ինքնավստահությունը աշակերտական բոլոր տեսակի խմբերում:
- Դասապրոցեսները կազմակերպել կորոնավիրուսային հիվանդության պայմաններում հանրակրթական ուսումնական հաստատություններում գործունեության կազմակերպման ուղեցույցի համաձայն:

## Ֆինանսական աշխատանք ուսումնանյութական բազայի հարստացում

1. Կազմել տարիֆիկացիան, ծախսերի նախահաշիվը և ներկայացնել դպրոցի խորհրդի հաստատմանը:
2. Ունենալ բյուջետային և արտաբյուջետային հաշիվներ:
3. Դպրոցում կազմակերպել լրացուցիչ վճարովի կրթական ծառայություններ /ըստ ցանկության/:
4. Տարվա ընթացքում ձեռք բերել անհրաժեշտ քանակությամբ գույք, ուսումնադիտողական պարագաներ, սպորտային գույք, օժանդակ նյութեր և գործիքներ, լաբորատոր սարքավորումներ:

5. Դպրոցական գույքն ու սարքերը բաժանել համապատասխան դասարանների, կաբինետների միջև ակտով հանձնել կաբինետի վարիչներին, ուսուցիչներին և մյուս պատասխանատու անձանց:
6. Մշտական հսկողություն սահմանել շենքի և գույքի պահպանման, ընթացիկ վերանորոգման ուղղությամբ:
7. Բարձրացնել դպրոցի տեխնիկական անձնակազմի պատասխանատվությունը շենքի և շրջակայքի մաքրության հարցում:
8. Կատարել դպրոցի հաշվեկշռում եղած գույքի, սարքավորումների հաշվառում:
9. Հետևել էլեկտրաէներգիայի, ջրի և գազի խնայողությանը:
10. Հետևել որ ժամանակին հաշվարկվի և վճարվի աշխատողների աշխատավարձը:
11. Աշխատավարձի ֆոնդի տնտեսումների հաշվին հնարավորության դեպքում բարձրացնել աշխատողների աշխատավարձը:
12. Ժամանակին լրացնել և հանձնել ֆինանսական հաշվետվությունները:
13. Միջոցներ ձեռնարկել դպրոցի ջերմամեկուսացման, ջեռուցման սեզոնը պատրաստված անցկացնելու համար:

- Սահմանել հսկողություն դաստիարակության և ուսուցման միասնական պահանջների իրականացման նկատմամբ: Ստուգումների արդյունքները լուսաբանել և քննարկել մանկխորի նիստերի ժամանակ:
- Հետևողական լինել դպրոցի պահանջների կատարման գործում: Հասնել նրան, որ չլինի բացակայող և ուշացող ուսուցիչ ու աշակերտ:
- Շարունակել սերտ կապը ծնողների հետ երեխաների կրթության և դաստիարակության գործում՝ նպատակաուղղելով ամբողջ աշխատանքը միասնական պահանջների կատարմանը:
- Կատարելագործել ամբողջ աշխատանքը հայեցի դաստիարակության, ժամանակակից դպրոցի պահանջներին համապատասխանող բազմակողմանի դաստիարակության խնդիրների լուծման համար:
- Աշակերտների աշխարհայացքն ընդլայնելու, համամարդկային բարձրագույն նվաճումների հետ կապելու, բազմակողմանի զարգացնելու նպատակով ավելի լայն ձևով օգտագործել <<Ինտերնետ կենտրոնի>> հնարավորությունները:
- Ֆիզիկական դաստիարակության արդյունավետ կազմակերպման նպատակով բացել սպորտային խմբակներ:
- Լինգաֆոնայի կաբինետի ու համակարգչային դասարանի օգնությամբ դասը դարձնել ավելի հետաքրքիր ու բովանդակալից: Հասնել այն բանին, որ ամեն առարկայի ուսուցիչը համարձակ ու նպատակային օգտագործի գիտատեխնիկական միջոցները և նպաստի դասապրոցեսի ակտիվացմանը և հագեցվածությանը: